

Գեղարքունիքի մարզպետն ընդունեց մարզի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին

20.06.2017

Հունիսի 20-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն ընդունեց մարզի շուրջ երկու տասնյակ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Բացման խոսքում մարզպետը նշեց, որ մեծ գնահատանքի է արժանի քաղաքացիական հասարակության ծավալած աշխատանքը և որ դեռևս շատ խնդիրներ կան մարզում, որոնց լուծումն առանց քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավման դժվար է պատկերացնել: Մարզպետը կարծիք հայտնեց, որ մարզային իշխանությունների հետ տևական ժամանակ ընթացող համագործակցությունն ավելի կընդլայնվի ու հնարավորինս արագ կստեղծվեն պայմաններ նոր գաղափարներ կյանքի կոչելու համար: Հանդիպման ընթացքում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներն ամփոփ տեղեկատվություն ներկայացրին իրենց գործունեության կոնկրետ ուղղությունների, իրականացրած և ընթացքի մեջ գտնվող ծրագրերի վերաբերյալ, մարզպետից ակնկալելով համագործակցություն և աջակցություն՝ կոնկրետ խնդիրների լուծման հարցում: Կարեն Բոթոյանը պատրաստակամություն հայտնեց իր լիազորությունների և հնարավորությունների շրջանակներում աջակցել մարզի զարգացմանը միտված ծրագրի իրականացմանը, ինչպես նաև խոստացավ նման ձևաչափի հանդիպումներին հաղորդել պարբերական բնույթ: